

ները կը պատուեն զանոնք պարտէզ տանելով ու շըրջեցնելով քաղաքին գլխաւոր վայրերը՝ Գաբըճա, «Թագաւորաց տեղիքն» և Չամըճա: Մայիս 30ին, Երկուշաբթի, կը մեկնին Պրուսայէն և Յունիս Չին կը վերադառնան Կ. Պոլիս:

1654 Մայիս 22 Երկուշաբթի, տօն Սրբոց Կուսանացն Հռիփսիմեանց, յիշատակելի օր մը կ'ըլլայ Երեմիայի կեանքին մէջ: Այդ օրը, մինչ նոր լրացուցած էր տասնևեօթն տարին ու ինը օրէ ի վեր թեւակոխած էր տասնևութին մէջ, Սուրբ Նիկողայոսի եկեղեցին տեղի կ'ունենայ իր պսակադրութիւնը մեծ հանդէսով: Օրեր առաջ հարսանիքի նախապատրաստութիւններ կը տեսնուին: Մայիս 11ին Կ. Պոլսոյ և շրջակայից փոռները կ'երթան ու հարսանիքի կը հրաւիրեն Մահտեսի Ամբակումի արհեստակիցները. նոյնպէս Մայիս 13ին ուրիշ խանութներ կ'այցելեն նոյն նպատակով: Եւ որովհետեւ այդ օրերուն նորոգութիւններ կը կատարուէին իրենց տան մէջ, այդ պատճառաւ հարկ կ'ըլլայ հարսանիքի համար Սօճա Պալի առուն ազգայինին տունը վարձել ու բոլոր հրաւիրեալները նախօրօք, այսինքն Մայիս 21, Եղիական Կիրակին, հոն համախմբել: Այն տեղէն կէսօրին նշանօրհնէքի կ'երթան Ս. Նիկողայոս եկեղեցին, ուր ներկայ էին երկու կողմի տաներէցները ու վարդապետներ: Վերջիններէս մին խրատականը կը խօսի ու կը յորդորէ սիրով տանիլ ամուսնական լուծը և խաղաղութեամբ կենակցիլ միմեանց հետ: Նոյն երեկոյին տեղացող յորդահոս անձրեւը արգելք կ'ըլլայ հարսանեկան ընթրիքը ընել Սօճա Պալիի տան պարտէզին մէջ ու հարսնւորները կը ստիպուին ներս քաշուիլ ու նստիլ բազմոցներու վրայ «մի ի վերայ միոյ»:

Հետեւեալ օրը, Երկուշաբթի (22 Մայիս), Սուրբ